Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891·99
Q-85

Ա.ՊԱՌՍԵԱՆԻ

ՍԻՐՈՎՐԻՔ

Վոդեվիլ-կատակ. 1 գործ.

ԹԻՖԼԻՍ
Պրակտիկ Վրաց. Հրատ. Ընկ.
1904

891.99
Ա-85

01 JAN 2009
19 NOV 2010

Ч48
891.99
Ա-85

Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ

ՍԻՒՐՊՐԻԶ

Վոդեվիլ-կատակ. 1 գործ.

Настоящая піеса подъ заглавіемъ „Сюрпризъ", разрѣшена и. о. Главноначальствующаго для представленія на сценахъ края. 22 декабря 1903 г.

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Վրաց Հրատարակչ. Ընկ.
1904

22.02.2013

21788

Дозвол. Ценз., г. Тифлисъ, 10 декабря 1903 г.

32923-61

Ч. Ованесяновъ

ՍԻՐՊՐԻՔ

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԲԻԲԻԿԵԱՆ, նշանաւոր դիրք ունեցող անձնաւորութիւն քաղաքում։ Հաղնում է վերջին տարազով։

ՏԻԿ. ՄԱՐԻԱՄ, սորա կինը. նախագահուի զաւակն բարեգործակ. ընկերութիւնների։

ԵԼԵՆԱ, սոցա աղջիկը. ինստիտուտ ավարտած օրիորդ։

ՍԱՇԱ, աղախին։

Բեմը ներկայացնում է.

Հարուստ ընդունարան Բիբիկեանի տանը. աջ նախաբեմում դաշնամուր, խորքում կօղետկայ, բազկաթոռներ, պուֆեր, վարագոյրներ, տրեւլիաժ, պատկերներ, ծաղիկներ և այլն։ Միջին, երկու ձախ և մի աջ դռներ. ձախ, փոքրիկ գրասեղան։ Միջի դռանը ելեքտրական զանգ.

Տեսիլ Ա.

ԵԼԵՆԱ. (Դաշնամուրի վերայ նուագում եւ երգում է գէյշա վալսը)։

Տ. ՄԱՐԻԱՄ. (Պաուզայից յետոյ մ'ցնելով)։ Helène, *այդպիսով հարեւանների ականջները կտանես։ Ի՞նչ ես կպել այդ գէյշայից և առաւօտից մինչև երեկոյ ամբողջ ոյժովդ թմբկահարում. ասենք դա տարածուած երգ է, բայց հարկաւոր է որ ուրիշներին էլ խղճաս։*

ԵԼԵՆԱ. *Մայրիկ, դու էլ ես նոյն բանի համար յանդիմանում ինձ, բաւական չէ որ հօրս ներկայութեամբ ես չեմ համարձակւում օպերեաներից մի բաղ-*

խումն անգամ վերցնելու, որովհետև նա առում է օպերետներ. իսկ այժմ, երբ նա տանը չէ, դու ևս նոյնը արդելում ես ինձ. սա ուղղակի պատիժ է... ինչ թշչուառ արարածներ ենք մենք... տարիներով փթում ենք ինստիտուտում, մտածում ենք ահա կաւարտեմ, քիչ ազատ շունչ կքաշեմ, կնետուեմ կեանքը որ լի է պարահանդէսներով, թատրոններով, դիմակահանդէսներով... այո, ամեն բան քեզ այդպէս ժպտում, երջանիկ է թւում։ Բայց ցնորքներ... երևակայեցէք, ամենամօտ անձնաւորութիւնները անգամ— հայրն ու մայրը, նոյն իսկ արդելում են դաշնամուրի վրայ նուագելը։

Տ. ՄԱՐԻԱՄ. Նուագիր Բեթխովենի սոնատը, ով է քեզ արդելում. իսկ այդպիսի յիմարութիւնները...

ԵԼԵՆԱ. Ի սէր Աստուծոյ, ազատեցէք ինձ Բեթխովենի այդ սոնատներից. բաւական է ինչքան դրանք ինստիտուտում գլուխս տարան։

Տ. ՄԱՐԻԱՄ. Ես չեմ վիճում քեզ հետ երաժշտութեան մասին. բայց դու շատ լաւ գիտես որ հայրդ վրդովւում է երբ

դու օպերետայից ես նուագում, ուրեմն, խօսելը աւելորդ է և վերջապէս ես ժամանակ չունիմ; ես շտապում եմ նիստի և ժամանակի կորուստ եմ համարում խօսել այդպիսի յիմարութիւնների մասին. դու էլ լաւ կանես, գնաս և ֆրանսերէն դասերովդ պարապես. Helène, passe et laisse moi tranquille... tu mâgasse*) Դու շատ լաւ գիտես որ ես գնալու եմ նիստի և խնդրում եմ ինձ չ'վրդովես— c'est intolerable**).

ԵԼԵՆԱ. Մայրիկ, իսկապէս սա անտանելի է. յիշիր որ ես էլ մարդ եմ, ուզում եմ ապրել: Ահա մի տարի է ինչ աւարտել եմ ինստիտուտը, նոյն իսկ շիֆրով, բայց ինչ... voilà c'est tous***) սրանով է սահմանափակւում ամբողջ կեանքս. վերջապէս ով է ինձ համար մտածողը... Մայրս օրերով զբաղուած է իր բարեգործական ընկերութիւններով, իսկ հայրս իրեն միակ գործն է դարձրել թռև գալ

*) Հեղինէ, գնա և ինձ հանգիստ թող։
**) Սա անտանելի է։
***) Ահա բոլորը։

դերձակների եռեից և օրերով զբաղուել այն բրիւկի հարցով որ նա պատուիրել է Փարիզում։

Տ. ՄԱՐԻԱՄ. Սիրելիս, քեզ համար դեռ շատ վաղ է խօսել բրիւկների մասին։

ԵԼԵՆԱ. (Պարզութեամբ). Չէ՞ որ նրանք հօրս են։

Տ. ՄԱՐԻԱՄ. (Ոչ հաստատական). Դա միևնոյնն է, կարծեմ ասացի քեզ, որ գնաս և զուր տեղը ջղերս չկրգռես. (պառզա) Comprtu... comprends tu*).

ԵԼԵՆԱ. (Կողմը գնալով). Ասաւած իմ, երբ պէտք է ամուսնանամ։ (գնում է)։

Տեսիլ Բ.

ՏԻԿ. ՄԱՐԻԱՄ. (Զանգահարում է. մտնում է Սաշան)։

ՍԱՇԱ. Ի՞նչ էք կամենում։

*) Հասկացար...

Տ. ՄԱՐԻԱՄ. Զգեստս պատրաստեցէք, ես իսկոյն նիստի եմ գնալու։

ՍԱՇԱ. Որը կհրամայէք. հուլունքներովը։

Տ. ՄԱՐԻԱՄ. Ոչ, ֆայի։

ՍԱՇԱ. Իսկոյն (գնում է ձախ)։

Տեսիլ Գ.

ՌԻԲԻԿԵԱՆ. (Ներս է վազում կապոցով). Երևակայիր Մուսիա, ես այս ըոպէիս գալիս եմ փոստից... այսինքն, ոչ թէ փոստից այլ ծառայութիւնից... ոչ թէ ծառայութիւնից այլ... թֆու, բարկութիւնից մինչև անգամ լեղուս էլ է կապուում... Հասկանում ես... այն կոչագիրը ստանալուն պէս կանչում եմ կառքը և ուղղակի դեպի փոստ... կարծեմ հասկանում ես ինչի մասին է խօսքս.—Փարիզում պատուիրածս բրիւկի մասին... փոստատանը անհամբեր սպասում եմ պօսիլկային ստանալուն... Վերջապէս ստանում եմ, վերցնում և վազում նորից ծառայութիւն։ Սպասիր խօսքս մի կարիր։ Հաս-

նում եմ պաշտօնատեղս, անմիջապէս բա-
նում և տեսնում եմ մի հրաշալի բրիւկ,
իսկական անգլիական կտորից... Ուրա-
խութեանս չափ չկար։ Ցանկացայ նայել
թէ ինչպէս է վրաս կանգնում. սակայն
չունեցայ համբերութիւն. փակւում եմ
առանձնասենեակս, հրամայում եմ ոչ
ոքին չընդունել. շտապ հագնում եմ նոր
բրիւկս և ինչ... ո՜ սարսափ, ամբողջ
տասը սանտիմետրի չափ երկար է։ Դեռ
վճռեցի իսկոյն տանել դերձակի մօտ
կարճացնել տալու, բայց ես այդ չարի,
որովհետև, նախ՝ բոլորի հետ կռուած եմ
և երկրորդ, կծիծաղեն ասելով՝ ահա
ձեզ և փարիզեան դերձակներ... այժմ
ահա, Մուսիո, վճռեցի խնդրել քեզանից,
որ ինձ պարտաւորացնես և այսօրևետ,
ուղիղ տասը սանտիմետրով կարճացնես։

Տ. ՄԱՐԻԱՄ. Ah, laisse mois tranquille*). Դու շատ լաւ գիտես թէ ինչպէս զբաղուած և խճճուած եմ գործերիս մէջ, իսկ դու էլ ձանձրացնում ես ինձ այդպիսի յիմարութիւններով։

*) Ախ, թող ինձ հանգիստ։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Տխրացած). Յիմարութիւններով... ներեցէք տիկին, ոչ թէ այս է յիմարութիւնը այլ ձեր բոլոր հասարակական ասած գործերը։

Տ. ՄԱՐԻԱՄ. Ինչպէս, դու հասարակական գործերը յիմարութիւն ես անուանում։

ԲԻԲԻԿԵԱՆ. Այո, յիմարութիւն։

Տ. ՄԱՐԻԱՄ. Շնորհաւորում եմ ձեզ։

ԲԻԲԻԿԵԱՆ. Ի՞նչ պատճառաւ։

Տ. ՄԱՐԻԱՄ. Դուք ցնորուել էք։

ԲԻԲԻԿԵԱՆ. Ո՛չ, այդ դուք էք ցնորուել ձեր այդ հասարակական գործերի հետ միասին։

Տ. ՄԱՐԻԱՄ. Ես այս բոպէիս նիստ ունիմ; ինձ սպասում են այնտեղ, աղախինն էլ ինձ հագցնելու սպասում է սենեակումս, իսկ միևնոյն ժամանակ դու էլ բրիւկիդ խնդիրն ես մէջը ձգում։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Հասարակութեան). Ահա ձեզ ընտանեկան երջանկութեան կեանքից մի օրինակ. կինը չէ ուզում մարդու բրիւկը կարճացնել թէ ինչ է նա զբաղուած է հասարակական գործերով։ Ոհ, կանայք, կանայք. (բարկացած գնում է)։

Տեսիլ Դ.

Տ. ՄԱՐԻԱՄ. Դնաց, կատաղեց... գնամ, առանց նրա գիտութեան կարճացնեմ և յետոյ ինքս մի լաւ ծիծաղեմ ամուսնուս վերայ. հա, հա, հա... ախ, մարդիկ, մարդիկ. (վերցնում է բրիկը եւ դուրս գնում)։

Տեսիլ Ե.

(Դրսից եղեfտական զանգի ձայն)։

ՍԱՇԱ. (Մտնում է երկրորդ դռնից, գնում է միջին դռնով եւ վերադառնում է ծrառով մoտենալով առաջին ձախ դռանը որը փակ է). Պարոն, պարոն։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Դրսից բարկացած). Ի՞նչ է։

ՍԱՇԱ. Ձեզ նամակ կայ։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Մտնելով). Նամա՞կ... ինչ նամակ. (խլելով կարդում է հասցէն) «Նախագահուհուն»... (Սաշային). Ցիմար, վազուց է ինչ կին եմ դառել։

ՍԱՇԱ. Ներեցէք պարոն, կարծեցի ձերն է, բայց երևում է որ...

ԲԻԲԻԿԵԱՆ. Բայց երևում է որ քո տիկնոջդ—յիմարուհիների նախագահուհին է. (գնում է ձախ)։

ՍԱՇԱ. (Մենակ). Ի՞նչ է կատաղել... ինչ որ խելքը գլխին չէ այսօր. տանեմ տիկնոջը տամ։ (գնում է)։

Տեսիլ Զ.

Տ. ՄԱՐԻԱՄ. (Մտնում է բրիկով). Լաւ ժամանակ վերջացրի, ինձ սպասում են նիստի, իսկ բրիկն էլ պատրաստ է։ Կարեցի ուղիղ տասը սանտիմետր. կգնեմ նոյն տեղը, լաւ սիրուղիղ կլինի, ոչ ոք ոչինչ չգիտէ, նոյն իսկ Սաշան չնկատեց։ Դէհ, ժամանակ է գործի գնալու։ Երբ կվերադառնամ, կտեսնեմ նրան ժպտալիս. Ո՜հ, մարդիք, մարդիք... (գնում է միջին դռնով)։

Տեսիլ Է.

ԲԻԲԻԿԵԱՆ. (Մտնում է եւ զանգահարում). Ես ցոյց կտամ նրանց. (մտնող Սաշային). Ո՞ւրտեղ է օրիորդը։

ՍԱՇԱ. Նրա մօտ ֆրանսերէն լեզուի ուսուցչուհին է...

ԲԻԲԻԿԵԱՆ. Իսկ տիկինը։

ՍԱՇԱ. Նիստի է գնացել

ԲԻԲԻԿԵԱՆ. (Նամակը տալով). Ցանձնիր օրիորդին այս նամակը, հէնց որ դասը վերջացնի. (գնում է միջին դռնով)։

Տեսիլ Ը.

ՍԱՇԱ. (Մենակ). Ճշմարիտ որ այսօր մեր տանը մի ինչ որ բան է կատարւում։ Ինձ դռնապանը ասաց, որ այս օրերս սրանք հաշուեւտուութիւն ունին. աւելի լաւ է շուտ յանձնեմ այս նամակը թէ չէ լաւ բաղդի չեմ հանդիպիլ. (գնում է)։

ԵԼԵՆԱ. (Աջից մտնելով, կարդում է Սաշայի տուած նամակը) «Դուք ապերախտ խոզեր. կարծեմ ձեր ոչ մի ցանկութեան երբէք մերժում չէ եղել. իսկ դուք, նոյն իսկ իմ տանը, մինչև անգամ չէք ուզում յարգել իմ մէջ մարդկային արժանաւորութիւնները։ Ինչ է մնում ինձ անելու, եթէ ոչ դիմել ապահարզանի... Մայրը զբաղուած է բարեգործական ընկերութիւններով, աղջիկը ֆրանսերէն դասերով և օպերետային դայլայլիկներով... իմ ամենաչնչին խնդիրները անգամ մնում են «ձայն բարբառոյ անապատի»։ Տարաբախտաբար հէնց այսօր խաղում են Գէյշա և ես ուզեցի ձեզ սիւրպրիզ անել. կասիրին խնդրեցի մեզ մի օթեակ պահէ, բայց անիծուին բոլոր այդ օպերետները և բարեգործական ընկերութիւնները, երբ օրինաւոր կինը հրաժարւում է ամուսնոյ բրիւկը, մի ինչ որ չնչին տասը սանտիմետրով, կարճացնելուց։ Եթէ այդպէս է, ես էլ իմս կանեմ, տեսնենք ով կ'զղջայ։ Ես իսկոյն գնում եմ կասսիրին ասելու որ մեր օթեակը ծախէ»...

Խեղճ հայրս... իմ խեղճ հայրիկս։ Ո՞ւրքան բարի է նա, իսկ մենք ոչչափ չար... բայց ինչ բրիւկի մասին է ասում... (նկատելով բրիւկը) ահա նա. նոր բրիւկ, երևի լաւ չէ եկել. (մտածելով) Սպասեցէք, սպասեցէք. (նամակին նայելով) կարծեմ այստեղ չափն էլ է յիշուած... տասը սանտիմետր.. օ՜, հրաշալի է. ոչ ոքին բան չասած կ'կարճացնեմ և այսպիսով հօրս սիրտը կանեմ։ Խեղճ իմ հայր, դու չգիտես թէ աղջիկդ քեզ համար՝ ինչ է պատրաստում։ (տանում է բրիւկը)։

(Լսում է զանգի ձայն Սաշան գնում է բանալու)։

Տեսիլ Թ.

ՏԻԿ. ՄԱՐԻԱՄ. (Մտնելով). Պարոնը տանն է։

ՍԱՇԱ. Ո՛չ, գնացին, իսկ դուք տիկին, ինչու այդպէս շատ դարձաք։

Տ. ՄԱՐԻԱՄ. Անդամների թուի պակասութեան պատճառով նիստը չկայացաւ

(շուրջը նայելով, կողմը) բրիւկը չկայ, երևի տարել է. շատ հետաքրքիր է թէ ինչով կվերջանայ։ Օ՜խ, մարդիկ, մարդիկ. (գնում է իր սենեակը)։

Տեսիլ Ժ.

(Զանգ. Սաշան գնում է բանալու)։

ԵԼԵՆԱ. (Բերում է բրիւկը). Զանգ... հայրս պէտք է լինի, լաւ ժամանակն եմ վերջայրել, կտրեցի ուղիղ տասը սանտիմետր. նա երբէք չի կարող երևակայել, որ ես եմ կարճացրել. կգնեմ իրա տեղը. (գնում է աջ)։

Տեսիլ Ի.

ԲԻԲԻԿԵԱՆ. (Սաշային). Ես գնում եմ սենեակս, ինձ լաւ չեմ զգում և եթէ հարցնեն ինձ, չընդունես ոչ ոքի։ Ոչ տիկնոջդ և ոչ օրիորդին, լսում ես։

ՍԱՇԱ. Լսում եմ։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Բրիւկը նկատելով). Դարձեալ այստեղ է ընկած այս անտէրը։

ՍԱՇԱ. Ի՞նչու էք անտէր ասում, պարոն։

ԲԻԲԻԿԵԱՆ. Որովհետև մեր տանը չգտնուեց մի մարդ, որ այդ կարճացնէր։

ՍԱՇԱ. Ինչու ինձ չասացիք, պարոն։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Նայում է նորան). Ցեռոյ, դու կարող էիր։

ՍԱՇԱ. Ի՞նչ էք հրամայում, մի անդամ նշանածիս համար նոյն իսկ նոր բրիւկ կարեցի։

ԲԻԲԻԿԵԱՆ. (Ուրախ). Մի՞թէ։

ՍԱՇԱ. Ճշմարիտ եմ ասում, պարոն։

ԲԻԲԻԿԵԱՆ. Իսկ դու չե՞ս փչացնիլ...

ՍԱՇԱ. Հանգիստ եղէք պարոն։

ԲԻԲԻԿԵԱՆ. Բայց տես. Փարիզումն է կարուած։

ՍԱՇԱ. Մենք էլ այստեղ, ըստ Փարիզի կը կարճացնենք։

ԲԻԲԻԿԵԱՆ. Եթէ այդպէս է, ահա թէ ինչ Սաշա—տար և ուղիղ տասը սանտիմեար կարճացրու։ Տես չսխալուես, տասը սանտիմեար, նայիր ոչ ոք չտեսնի, յետոյ տար սենեակս։

ՍԱՇԱ. Իսկոյն պարոն. (տանում է բրիւկը)։

Տեսիլ Լ.

ԲԻԲԻԿԵԱՆ. Ահա ձեզ բան... բաւական կծիծաղեմ նրանց վրայ. կաշխատեմ գոգռել նրանց խանդը. կ'երդուեմ որ աղախինս է կարճացրել... հա, հա, հա... ահա քեզ ծիծաղ. բայց ինչ անել տոմսակի հետ, կասսիրը չէ ուզում հետ վերցնել... էհ, ոչինչ, կհրաւիրեմ սրանց թատրոն, ես էլ կհագնեմ փարիզիան նոր բրիւկս...

Տեսիլ Խ.

Տ. ՄԱՐԻԱՄ. (Մտնելով). Բարև, ma ange*).

ԲԻԲԻԿԵԱՆ. (Նոյն տօնով). Bongour mon cher**).

---

*) Հրեշտակս։

**) Բարև սիրելիս։

Տ. ՄԱՐԻԱՄ. (Շուրջը նայելով. կողմը) Բրիւկը չէ երևում: վերցրել է. հեռաքրքիր է հասկացե՞լ է թէ ոչ:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Կողմը). Նա ոչինչ չգիտէ:

Տ. ՄԱՐԻԱՄ. (Խորհրդաւոր). Որտեղ է քո նոր բրիւկը:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Նոյն ձայնով, իր դուռը ցոյց տալով). Այնտեղ, տիկին:

Տ. ՄԱՐԻԱՄ. Ինչու էլի չհագար, մի անգամ էլ փորձէիր, գուցէ սխալուած ես:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Կողմը). Ոչինչ չեմ ասիլ. (Ցրաւ). Աւելորդ եմ համարում, madame. (Երգում եւ պարում է զէյշայից):

Տ. ՄԱՐԻԱՄ. Ի՞նչ է պատահել քեզ. (կողմը) կարծես հասկացել է:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Շարունակում է պարը):

Տեսիլ Ծ.

ԵԼԵՆԱ. (Մտնելով). Սա ինչ է նշանակում: Հայրիկ, դու ինձ արգելում էիր օպերետայից նուագել, իսկ դու այժմ, նոյն իսկ, Դէյշա ես պարում:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Շարունակում է):

ԵԼԵՆԱ. Չէ հասկացել արդեօք. (Նայում է) հէնց այդպէս է, բրիւկը չկայ:

Տ. ՄԱՐԻԱՄ. (Նայելով). Ո՛չ, նա արդէն հասկացել է:

ԲԻԲԻԿԵԱՆ. (Պարը շարունակելով). Մենք այսօր գնում ենք դէյշա, օթեակ ունենք: Պատրաստուեցէք, ես էլ գնամ հագնուեմ: Ես այսօր ուզում եմ ձեզ սիւրպրիզ անել. հա, հա, հա... (գնում է):

Տ. ՄԱՐԻԱՄ. (Կողմը). Իսկոյն կը պարզուի:

ԵԼԵՆԱ. (Կողմը). Ինչպէս կուրախանայ խեղճ իմ հայրս... (մօրը) Հայրս որքան բարի է, նա մոռացում է մեր բաւականութեան մասին, իսկ մենք այնքան ապերախտ ենք, որ չուզեցինք նորա ամենաչնչին խնդիրը կատարել—կարճացնել նորա բրիւկը:

Տ. ՄԱՐԻԱՄ. (Կողմը). Անմեղ երեխայ, ես արդէն արել եմ ինչ որ հարկաւոր էր: (Ցրաւ) Եթէ ես ամուսին եմ, դու էլ աղջիկն ես, կարող էիր գոնէ մի անգամ, կատարել հօրդ ցանկութիւնը:

ԵԼԵՆԱ. (Կողմը). Իսկ, նա չգիտէ որ, ինչ մերժել է մայրը, կատարել է աղջիկը։ (ներս) Ես զբաղուած էի։

ՌԻԲԻԿԵՆԱՆ. (Դուրից կատաղած). Ի՞նչ է նշանակում այս... Տէր իմ Աստուած... անօրէններ... բրիւկս... Թշուառներ... (դուրս է գալիս կարճ, հազիւ ծնկներին հասնող բրիւկով). Սաշա, Սաշա. (մտնում է Սաշան) Այս ինչ ես արել Թշուառական, չէ՞ որ քեզ պատուիրեցի միայն տասը սանտիմետր կարճացնես։

ՍԱՇԱ. Աստուած վկայ, պարոն, ես միայն տասը սանտիմետր կտրեցի։

Տ. ՄԱՐԻԱՄ. (Սարսափած). Ինչպէ՞ս, դու էլ կտրեցիր... ես ևս տասը սանտիմետր կտրեցի։

ԵԼԵՆԱ. (Շփոթուած). Դու էլ մայրիկ, բայց չէ՞ որ ես ևս տասը սանտիմետր կտրեցի։

ՌԻԲԻԿԵՆԱՆ. (Այս բոլոր ժամանակը մէկին եւ միւսին է նայում). Տասի տեղ երեսուն... կտրուել, փչացրել են անիծեալները... տասի տեղ երեսուն սանտիմետր են կտրել... կէսցէք. ուղեցել են

պէտք գալ, հաճոյանալ ինձ... (կնոջ) տեսնում էք, տիկին, ի՞նչ է նշանակում զբաղուել հասարակական գործերով... դուք պէտք է ձեր ամուսնու բրիւկով զբաղուէք և ոչ թէ հասարակական խնդիրներով։ (աղջկան) Իսկ դուք յարգելի օրիորդ, այսօրուանից թատրոնի երեսը չէք տեսնիլ։

ՎԱՐԱԳՈՅՐ

Մեծ Հայրենական Գրադարան
Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասհյան անվան

ПЕРЕДАНО
ВО ВСЕ
ОБЩЕЕ
ПОЛЬЗОВАНИЕ

ԳԻՆԸ՝ 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0313352

21.788